ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» 2007թ. գործունեության հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամը» գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2007թ. օգոստոսի 20-ին (գրանցման համար 222.160.00785, վկայականի համար 03Ա076995): Գտնվելու վայրն է՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան է:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմված է 7 հոգուց. համանախագահներ՝ Ռ.Մարտիրոսյան և Ա.Աբրահամյան, խորհրդի անդամներ՝ Ս.Համբարձումյան, Գ.Ծառուկյան, Գ.Ղազինյան, Հ.Սարաֆյան, Ե.Ազատյան:

Հիմնադրամը հետապնդում է գիտական, գիտակրթական, սոցիալական, բարեգործական, բնապահպանական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամի ֆինանսները առաջանում են բարերարների նվիրատվություններից: Բարերարները կարող են լինել ինչպես կազմակերպություններ, այնպես էլ անհատ անձինք: 2007թ. ընթացքում հիմնադրամը ստացել է 16.780.000 (տասնվեց միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) դրամի և 299.992(երկու հարյուր իննսունինը հազար ինն հարյուր իննսուներկու) ԱՄՆ դոլարի նվիրատվություն:

2007թ. ընթացքում կատարված են միայն վարչակառավարչական ծախսեր 3,093 մլն (երեք միլիոն իննսուներեք հազար) դրամի չափով, այդ թվում՝

1.աշխատանքի վարձատրություն - 760 հազ (յոթ հարյուր վաթսուն հազար) դրամ,

2. պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ - 162 հազ (հարյուր վաթսուներկու հազար) դրամ,

3.այլ ծախսեր – 104 (հարյուր չորս հազար) դրամ

4.արտառժույթի փոխանակման հետ կապված ծախսեր 2,067 (երկու միլիոն վաթսունյոթ հազար)դրամ:

Հոգաբարձուների խորհրդի անդամները չեն օգտվել հիմնադրամի միջոցներից: Հիմնադրամի միջոցները տրվել է աշխատավարձ տնօրենին՝ Հ.Մաթևոսյանին 400 (չորս հարյուր) հազար դրամ, հաշնապահին՝ Լ.Առուստամյանին 200 (երկու հարյուր) հազար դրամ, գործակալներին՝ Մ.Մանուկյանին՝ 160 (հարյուրվաթսուն) հազար դրամ:

Հիմնադրամի տնօրեն — Հրանտ Մաթևոսյան

Գլխավոր հաշվապահ — Լաուրա Առուստամյան